



COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր

ՀՂԻՈՒԹՅՈՒՆ, ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՈՒՄ ԵՎ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Արդյո՞ք հղի անձանց խորհուրդ է տրվում պատվաստվել COVID-19-ի դեմ

Այո: CDC-ն և հղիության մասնագետները, Ներառյալ՝ Մանկաբարձների և Գինեկոլոգների Ամերիկյան Ընկերությունը, Մոր և Պտղի Բուժամիությունը, ինչպես նաև Բուժակ-Մանկաբարձների Ամերիկյան Քոլեջը խորհուրդ են տալիս, որ հղի անձինք պատվաստվեն COVID-19-ի դեմ: Լավագույն պաշտպանության համար այն ներառում է խթանիչ դեղաչափով, ինչպես նաև պատվաստանյութերի հիմնական շարքով պատվաստումը: Պատվաստումը կարող է կատարվել հղիության ցանկացած փուլում:

Ինչո՞ւ է խորհուրդ տրվում COVID-19-ի դեմ պատվաստումը



COVID-19-ը լուրջ մտահոգություն է հղիության ընթացքում: Հղի և վերջերս հղի եղած մարդիկ, որոնք վարակվում են COVID-19-ով, ավելի հավանական է, որ ծանր կհիվանդանան, կհոսպիտալացվեն և կմահանան, քան այն մարդիկ, ովքեր հղի չեն: Բացի այդ, հղիության ընթացքում COVID-19-ով վարակված մարդիկ ավելի մեծ հավանականությամբ կունենան բարդություններ, որոնք կարող են ազդել իրենց հղիության և զարգացող պտղի վրա: Դրանք ներառում են վաղաժամ ծննդաբերություն և մահացած պտուղ:

COVID-19-ի դեմ պատվաստումը պաշտպանում է ինչպես հղիներին, **այնպես էլ** նրանց նորածիններին COVID-19-ի հետևանքով ծանր հիվանդանալուց: Pfizer և Moderna

պատվաստանյութերով պատվաստված մարդկանց հետազոտությունների ընթացքում հայտնաբերվել են վիրուսի դեմ պաշտպանիչ հակամարմիններ պորտալարի արյան մեջ և կրծքի կաթում: Բացի այդ, վերջերս կատարված [նստումնասիրությունը](#) հաստատեց, որ հղիության ընթացքում պատվաստումն արդյունավետ է եղել 6 ամսականից փոքր երեխաներին COVID-19-ի հետևանքով հոսպիտալացումից պաշտպանելու համար:

Արդյո՞ք COVID-19-ի դեմ պատվաստումն անվնաս է հղիության ընթացքում

Չկա որևէ ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստումը առաջացնում է հղիության ներառյալ ընկերքի զարգացման հետ կապված որևէ խնդիր: CDC-ն շարունակում է հետևել այն մարդկանց առողջական վիճակին, որոնք պատվաստվել են հղիության բոլոր եռամսյակների ընթացքում՝ հղիության և նորածինների առողջության վրա ազդեցությունը ավելի լավ հասկանալու համար: Ավելի քան հարյուր հազար հղի անձինք, որոնք պատվաստվել են, ենթարկվել են հսկողության, և հղիության ընդհատման, պտղի աճի կամ բնածին արատների հետ կապված վտանգի մեծացում չի հայտնաբերվել: COVID-19-ի դեմ պատվաստումը չի առաջացնում COVID-19-ով վարակում, այդ թվում՝ հղի մարդկանց կամ նրանց երեխաների մոտ: COVID-19-ի դեմ պատվաստանյութերից ոչ մեկը կենդանի վիրուս չի պարունակում: Դրանք չեն կարող որևէ մեկին վարակել COVID-19-ով, ներառյալ հղիներին կամ նրանց երեխաներին:



Շարունակվում են արձանագրվել բազմաթիվ ապացույցներ, որ COVID-19-ի դեմ պատվաստումը՝ նախքան հղիանալը և հղիության ընթացքում, անվտանգ և արդյունավետ է: Դա ենթադրում է, որ COVID-19-ի դեմ պատվաստման առավելությունները գերազանցում են հղիության ընթացքում պատվաստման ցանկացած հայտնի կամ հնարավոր վտանգը:



COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ՀՂԻՈՒԹՅՈՒՆ, ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ



Ինչպե՞ս կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկություններ

Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք smfm.org/covidfamily և CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստումը Հղիության Ընթացքում Կամ Կրծքով Կերակրման Ժամանակ](https://www.cdc.gov/covid19/) կայքէջերը:

Եթե հղի եք և պատվաստվելու վերաբերյալ հարցեր ունեք, խոսեք ձեր բժշկի հետ: Կարող եք նաև զրուցել MotherToBaby-ի փորձագետների հետ, որոնք կարող են պատասխանել ձեր հարցերին անվերելակ կամ իսպաներենով: Այս անվճար և գաղտնի ծառայությունը հասանելի է երկուշաբթիից ուրբաթ՝ առավոտյան 8-ից երեկոյան 5-ը: Կարող եք զանգահարել 866-626-6847 հեռախոսահամարով, տեքստային հաղորդագրություն ուղարկել 855.999.8525 համարին, էլ. նամակ ուղարկել ContactUs@mothertobaby.org հասցեին կամ սկսել զրույց այստեղ՝ mothertobaby.org/ask-an-expert/:

Կարո՞ղ եմ կրծքով կերակրող անձինք պատվաստվել



Այո: Փորձագետները, այդ թվում՝ CDC-ն, Մանկաբարձների և Գինեկոլոգների Ամերիկյան Ընկերությունը, Մոր և Պտղի Բուժմիությունը, ինչպես նաև Բուժակ-Մանկաբարձների Ամերիկյան Քոլեջը կրծքով կերակրող անձանց խորհուրդ են տալիս պատվաստել COVID-19-ի դեմ:

Կրծքով կերակրող անձինք չեն ընդգրկվել պատվաստանյութի փորձարկումներում: Այնուամենայնիվ, ելնելով այն ամենից, ինչ մենք գիտենք այս պատվաստանյութերի աշխատանքի մասին, կարծում ենք, որ պատվաստանյութերը վտանգ չեն ներկայացնում երեխայի համար: Վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կրծքով կերակրող մարդիկ, որոնք պատվաստվել են Pfizer կամ Moderna պատվաստանյութերով, ունեն հակամարմիններ իրենց կրծքի կաթում, ինչը կարող է օգնել պաշտպանել իրենց երեխաներին: Այս պատվաստանյութերը չեն ներթափանցում կրծքի կաթ:

Արդյո՞ք ինձ համար անվտանգ է COVID-19-ի դեմ պատվաստվելը, եթե ես մի օր ցանկանամ երեխա ունենալ

Այո: CDC-ն և բժշկական փորձագետները խորհուրդ են տալիս պատվաստել 5 տարեկան և բարձր տարիքի բոլոր անձանց: Սա ներառում է նրանց, որոնք հղի են, փորձում են հղիանալ կամ ապագայում կցանկանան հղիանալ, ինչպես նաև նրանց զուգընկերներին:



Չկա որևէ ապացույց, որ որևէ պատվաստանյութ, ներառյալ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը, առաջացնում են կանանց կամ տղամարդկանց պտղաբերության հետ կապված խնդիրներ: Չկա նաև ապացույց, որ COVID-19-ի դեմ պատվաստանյութերը ազդում են սեռական հասունացման կամ դեռահասների զարգացման վրա:

[COVID-19-ի դեմ իՌՆԹ \(mRNA\) պատվաստանյութով](#) պատվաստված 45 առողջ տղամարդկանց շրջանում անցկացված փոքր [ուսումնասիրության](#) շրջանակում ստուգվել են սերմնահեղուկի հատկանիշները պատվաստումից առաջ և հետո: Հետազոտություն իրականացնողները ուսումնասիրել են սերմնահեղուկի քանակն ու շարժը և պատվաստումից հետո դրանցում էական փոփոխություններ չեն հայտնաբերել: Համեմատության համար՝ մեկ այլ [ուսումնասիրություն](#) հայտնաբերել է պտղաբերության նվազում մինչև 60 օր այն տղամարդկանց մոտ, որոնք [վարակվել են](#) COVID-19-ով: Ավելի քան 2000 մարդկանց տվյալների այս ուսումնասիրությունը նույնպես տարբերություններ չի հայտնաբերել պատվաստված տղամարդկանց և կանանց մոտ հղիության հաջողության ցուցանիշներում՝ համեմատելով դրանք չպատվաստված անձանց ցուցանիշներ հետո: Շատ մարդիկ հղիացել են COVID-19-ի դեմ պատվաստելուց հետո: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստում Այն Մարդկանց Համար, Որոնք Ցանկանում են Երեխա Ունենալ](#) կայքէջը:



COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր

ՀՂԻՈՒԹՅՈՒՆ, ԿՐԾՔՈՎ ԿԵՐԱԿՈՒՄ ԵՎ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կարո՞ղ է COVID-19-ը ազդել իմ դաշտանային ցիկլի վրա



Որոշ կանայք հայտնել են պատվաստվելուց հետո իրենց դաշտանային ցիկլում փոփոխությունների մասին, ինչպես օրինակ՝ ցիկլի ուշացման, ավելի շատ հոսքի և ցավոտ կծկումների մասին: COVID-19-ի և դաշտանային ցիկլի մասին ուսումնասիրությունները սահմանափակ են: Երկու վերջին ուսումնասիրությունները ցույց են տվել տարածված, սակայն աննշան փոփոխություններ COVID-19-ի դեմ պատվաստումից հետո: Դրանք ներառում էին դաշտանային ցիկլի տևողության և ցիկլերի միջև ժամանակահատվածի փոփոխություններ, ինչպես նաև սովորականից ավելի առատ արյունահոսություն: Այս փոփոխությունները եղել են ժամանակավոր:

Կարևոր է հիշել, որ շատ հանգամանքներ կարող են ազդել դաշտանային ցիկլերի փոփոխության վրա, ինչպիսիք են՝ լարվածությունը, քնի խանգարումները, սննդակարգի, վարժությունների և որոշ դեղորայքի փոփոխությունները: Կարևոր է հաշվի առնել, որ անկանոն դաշտանային ցիկլերը շատ տարածված են դեռահասների շրջանում և կարող են ընդհանրապես որևէ հատուկ պատճառ չունենալ: Եթե ունեք անհանգստություն ձեր կամ ձեր երեխայի դաշտանային ցիկլի վերաբերյալ, խոսեք բժշկի հետ:

Այցելեք [VaccinateLACounty.com](https://www.vaccinatelacounty.com) կայքէջ COVID-19-ի դեմ պատվաստման վերաբերյալ տեղեկությունների համար, ներառյալ լրացուցիչ [ՀՏՀ-ներ](#), [Պատվաստման ժամանակագրւյց](#), որն արդուսակներով ցուցադրում է պատվաստման յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ այն մասին, թե [ինչպես Պատվաստվել](#):